DEPARTMENT OF HEALTH CARE SERVICES

# Հաղորդակցման գլոբալ լեզվի և տեղեկությունների տրամադրման նմուշներ

| **[Ֆլայեր/Մուտքագրել հատվածը]** |
|---|
| Հարգելի Medi-Cal-ի անդամ,<br><br>Հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ժամանակ դուք կարողացել եք պահպանել ձեր ծածկույթը՝ անկախ ձեր կյանքում հանգամանքների որևէ փոփոխությունից: Սակայն հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ավարտվելուն պես ձեր վարչաշրջանը կկատարի ստուգում՝ պարզելու, թե արդյոք դուք դեռևս համապատասխանում եք անվճար կամ ցածր արժեքով Medi-Cal-ին: Եթե դուք կամ ձեր տնային տնտեսությունից որևէ մեկը վարչաշրջանից ստանա նամակ Medi-Cal-ի ձեր ծածկույթի վերաբերյալ տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, տրամադրեք պահանջվող տեղեկությունները:<br><br>**Հանգամանքների փոփոխություն**<br>Շարունակեք հայտնել ձեր տնային տնտեսությունում տեղի ունեցող փոփոխությունների մասին ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակին: Դրանք ձեր եկամտի, հաշմանդամության կարգավիճակի, հեռախոսահամարի կամ փոստային հասցեի փոփոխություններն են: Դուք պետք է հայտնեք նաև, եթե ձեր տնային տնտեսությունում որևէ մեկը հղիացել է, եթե որևէ մեկը տեղափոխվել է կամ ցանկացած այլ բանի մասին, որը կարող է բացասաբար ազդել Medi-Cal-ի ձեր իրավունակության վրա: Այս փոփոխությունների մասին հայտնելը կարող է օգնել ձեզ, որ հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ավարտվելուն պես շարունակեք ստանալ Medi-Cal-ի ծածկույթը:<br><br>**Կոնտակտային տվյալների հաղորդումը**<br>Վարչաշրջանի համար կարևոր է ունենալ ձեր գործող կոնտակտային տվյալները: Հայտնեք ձեր կոնտակտային տվյալների ցանկացած փոփոխության մասին, որպեսզի բաց չթողնեք Medi-Cal-ի ծածկույթի վերաբերյալ կարևոր տեղեկությունները: Փոփոխված բոլոր կոնտակտային տվյալները, ինչպիսիք են ձեր հեռախոսահամարը, էլ. փոստի հասցեն կամ բնակության վայրի հասցեն, հայտնեք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակին առցանց, հեռախոսով, էլ.փոստով, ֆաքսով կամ անձամբ: Վարչաշրջանային գրասենյակների ցանկը կարող եք գտնել այս հղումով՝ http://dhcs.ca.gov/COL: Ձեր կոնտակտային տվյալները կարող եք թարմացնել նաև առցանց՝ CoveredCA.com կամ BenefitsCal.orgկայքերում:<br><br>**Տեղեկությունների հարցում**<br>Եթե դուք կամ ձեր տնային տնտեսությունից որևէ մեկը վարչաշրջանից նամակ է ստանում Medi-Cal-ի ձեր ծածկույթի մասին տեղեկություններ տրամադրելու խնդրանքով, տրամադրեք այդ տեղեկությունները: Դա կօգնի վարչաշրջանին ակտիվ պահել Medi-Cal-ի ձեր ծածկույթը:<br><br>**Հարցե՞ր ունեք**<br>Եթե հարցեր ունեք, կամ ձեզ անհրաժեշտ է օգնություն Medi-Cal-ի ձեր ծածկույթին հասանելիություն ունենալու համար, կամ եթե Medi-Cal-ի ձեր ծածկույթը կասեցվել է, կապվեք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակի հետ: Հաճախ տրվող հարցերը և պատասխանները կարելի է գտնել [ՀՏՀ էջում]: |

DEPARTMENT OF HEALTH CARE SERVICES

| [*Կայքի բաններ*] |
|---|
| **Կարևոր է.** Դուք անդամագրվա՞ծ եք Medi-Cal-ին: Ձեր կոնտակտային տվյալները փոխվե՞լ են անցած երկու տարում: Ձեր վարչաշրջանի գրասենյակին տրամադրեք ձեր փոփոխված կոնտակտային տվյալները, որպեսզի կարողանաք պահպանել ձեր անդամությունը: Գտե՛ք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակը: |




| [*Կայքէջի տեքստ վարչաշրջանի գրասենյակի էջի համար*] |
|---|
| Հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում Medi-Cal-ի շահառուները պահպանել են ծրագրի անդամությունը: Եթե ձեր կոնտակտային տվյալները կամ տնային տնտեսության հանգամանքները փոխվել են, թարմացրեք ձեր տեղեկությունններն այսօր՝ կապվելով ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակի հետ. [հեռախոսահամար, SAWS հարթակ և վարչաշրջանի հղումը գրասենյակների ցանկին]: Դա կօգնի ձեզ պահպանել Medi-Cal-ի ձեր ծածկույթը հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում: |

# DEPARTMENT OF HEALTH CARE SERVICES

| [Սոցիալական մեդիա] | |
|---|---|
| Medi-Cal-ի իրավունակության հարցերով ձեր վարչաշրջանի աշխատակիցը կարող է շուտով կապվել ձեզ հետ՝ հավաստիանալու, որ ձեր կոնտակտային տվյալները ճիշտ են: Ձեզ հետ չկապվելու դեպքում վարչաշրջանին տրամադրեք ձեր փոփոխված կոնտակտային տվյալները, որպեսզի կարողանաք շարունակել կարևոր տեղեկություններ ստանալ Medi-Cal-ի ձեր ծածկույթի վերաբերյալ. http://dhcs.ca.gov/COL: [վարչաշրջանի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալները կարելի է մուտքագրել այստեղ] | <br><br><br> |
| Դուք տեղափոխվե՞լ եք: Այդ մասին տեղեկացրե՛ք վարչաշրջանի՝ Medi-Cal-ի իրավունակության հարցերով զբաղվող աշխատակցին: Ձեր կոնտակտային տվյալների փոփոխությունները տրամադրելը կարևոր է, որպեսզի շարունակեք տեղեկություններ ստանալ Medi-Cal-ի ծածկույթի մասին, օրինակ՝ ծածկույթի նորացման փաթեթների մասին տեղեկությունները, նպաստի փոփոխության ծանուցումները կամ այլ խիստ կարևոր հիշեցումները. http://dhcs.ca.gov/COL [վարչաշրջանի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալները կարելի է մուտքագրել այստեղ] | <br> |




Դուք նոր աշխատա՞նք եք գտել: Այդ մասին տեղեկացրե՛ք վարչաշրջանի՝ Medi-Cal-ի իրավունակության հարցերով զբաղվող աշխատակցին: Կարևոր է հնարավորինս շուտ վարչաշրջանին հայտնել ձեր նոր եկամտի մասին: Հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում դուք, այնուամենայնիվ, կպահպանեք Medi-Cal-ի ձեր ծածկույթը՝ [http://dhcs.ca.gov/COL](http://dhcs.ca.gov/COL):




Դուք հղի՞ եք: Այդ մասին տեղեկացրե՛ք վարչաշրջանի՝ Medi-Cal-ի իրավունակության հարցերով զբաղվող աշխատակցին: Կարևոր է վարչաշրջանին հնարավորինս շուտ հայտնել տնային տնտեսությունում տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին: Հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում դուք, այնուամենայնիվ, կպահպանեք Medi-Cal-ի ձեր ծածկույթը՝ [http://dhcs.ca.gov/COL](http://dhcs.ca.gov/COL):



DEPARTMENT OF HEALTH CARE SERVICES

| | |
|---|---|
| Ձեր տնային տնտեսությունում տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին պետք է հնարավորինս շուտ հայտնեք ձեր վարչաշրջանի՝ Medi-Cal-ի հարցերով զբաղվող գրասենյակին: Փոփոխությունների մասին կարող եք հայտնել անձամբ, առցանց, հեռախոսով, էլ. փոստով կամ ֆաքսով:<br>Հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակում դուք, այնուամենայնիվ, կպահպանեք Medi-Cal-ի ձեր ծածկույթը՝ http://dhcs.ca.gov/COL: |  |



| ***[Հատված զանգի տեքստից]*** | |
|---|---|
| Զանգահարող շահառու | Գործակալ |
| Արդյո՞ք ես պետք է հայտնեմ տնային տնտեսությունում տեղի ունեցած որևէ փոփոխության մասին, որպեսզի պահպանեմ Medi-Cal-ի իմ ծածկույթը: | **Վարչաշրջանի/Կառավարվող բուժսպասարկման պլանի/համայնքային գործընկերների պատասխան.** Այո, ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակին դուք պարտավոր եք հայտնել ձեր տնային տնտեսությունում տեղի ունեցած ցանկացած փոփոխության մասին, այդ թվում՝ եկամտի փոփոխության մասին, եթե որևէ մեկը հղիացել է, տնային տնտեսության նոր անդամի կամ ձեր հասցեի ցանկացած փոփոխության մասին: Դա կարող է օգնել՝ ապահովելու, որ հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում շարունակեք ստանալ Medi-Cal-ի ձեր ծածկույթը [մուտքագրեք վարչաշրջանի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալները]: |
| Արդյո՞ք մենք պարտավոր ենք լրացնել և վերադարձնել ծածկույթի նորացման փաթեթները դրանք ստանալուց հետո: | **Վարչաշրջանի/Կառավարվող բուժսպասարկման պլանների/համայնքային գործընկերների պատասխան.** Այո, կարևոր է, որ Medi-Cal-ի շահառուները պատասխանեն փոփոխված տվյալների, այդ թվում՝ ծածկույթի նորացման փաթեթների վերաբերյալ վարչաշրջանի հարցումներին: Դա կօգնի հավաստիանալ, որ վարչաշրջանն ունի ամենաթարմ տվյալները, որոնք նրան անհրաժեշտ են Medi-Cal-ի ձեր ծածկույթը նորացնելու համար: Դա կօգնի վարչաշրջանին նաև պարզել, թե արդյոք դուք համապատասխանում եք անվճար կամ ցածր արժեքով ծածկույթին: |

| | |
|---|---|
| Արդյո՞ք կդադարեցվի Medi-Cal-ի իմ ծածկույթը, եթե հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի ընթացքում ես աշխատավարձի բարձրացում կամ պաշտոնի առաջխաղացում եմ ունեցել: | **Վարչաշրջանի/Կառավարվող բուժսպասարկման պլանների/համայնքային գործընկերների պատասխան.** Եկամտային փոփոխությունների մասին հայտնե՛ք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակին: Եթե հանրային առողջության ոլորտում ՔՈՎԻԴ-19-ի համավարակով պայմանավորված արտակարգ իրավիճակի շարունակման ընթացքում ունենում եք եկամտի ավելացում կամ փոփոխություններ տնային տնտեսությունում, դուք չեք կորցնի Medi-Cal-ի ձեր ծածկույթը: |
| Ես տեղափոխվել եմ: Ո՞ւմ պետք է հայտնեմ, որ ես տեղափոխվել եմ: | **Վարչաշրջանի պատասխան.** Մենք կարող ենք թարմացնել ձեր բնակության վայրի հասցեն: Այս փոփոխության մասին կարող եք հայտնել հեռախոսով, առցանց, փոստով, ֆաքսով կամ անձամբ:<br><br>**Կառավարվող բուժսպասարկման պլանի պատասխան.** Մենք կարող ենք թարմացնել ձեր բնակության վայրի հասցեն ձեր կառավարվող բուժսպասարկման պլանի համար: Կարևոր է, որ մենք փոխանցենք այս տեղեկությունները վարչաշրջանին, որպեսզի դուք կարողանաք շարունակել ստանալ Medi-Cal-ի ձեր ծածկույթի վերաբերյալ կարևոր ծանուցումները: Այդպես հարմա՞ր է ձեզ: Եթե չեք ցանկանում, որ մենք ձեր նոր հասցեն փոխանցենք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակին, պետք է կապվեք անմիջապես նրանց հետ և նրանց տրամադրեք ձեր փոփոխված տվյալները [մուտքագրեք վարչաշրջանի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալները]:<br><br>**Համայնքային գործընկերների պատասխան.** Կապվե՛ք ձեր վարչաշրջանի տեղական գրասենյակի հետ, որպեսզի նրանց տրամադրեք ձեր նոր հասցեն, որը կապահովի Medi-Cal-ի ձեր ծածկույթի շարունակումը [մուտքագրեք վարչաշրջանի տեղական գրասենյակի կոնտակտային տվյալները]: |

| **[IVR զանգի տեքստը]** |
|---|
| Եթե անցած երկու տարվա ընթացքում տեղափոխվել եք, ձեր բնակության վայրի նոր հասցեն տրամադրե՛ք ձեր վարչաշրջանի՝ Medi-Cal-ի հարցերով զբաղվող տեղական գրասենյակին, որպեսզի շարունակեք կարևոր տեղեկություններ ստանալ Medi-Cal-ի ձեր ծածկույթի վերաբերյալ: |
| Եթե ձեր տնային տնտեսությունում փոփոխություններ կան, օրինակ՝ եկամտի փոփոխություն կա, որևէ մեկը հղիացել է, տնային տնտեսությունում նոր անդամ է ավելացել կամ հասցեի փոփոխություն կա, այդ մասին հնարավորինս շուտ հայտնեք ձեր վարչաշրջանի՝ Medi-Cal-ի հարցերով զբաղվող տեղական գրասենյակին: |
| Եթե ձեր կոնտակտային տվյալները (հեռախոսահամար, էլ. փոստի հասցե, փոստային հասցե) փոխվել են, այդ փոփոխությունների մասին առցանց, հեռախոսով, էլ. փոստով, ֆաքսով կամ անձամբ հայտնեք ձեր վարչաշրջանի՝ Medi-Cal-ի հարցերով զբաղվող տեղական գրասենյակին: |